

ՀԱՅԵՐԵՆ – ՇՈՒՄԵՐԵՐԵՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՅՈՁԵՖ ԿԱՐՍՏԻ «ԱԼԱՐՈՂՅԱՆ» ՏԵՍՈՒԹՅԱՆ

Գերմանացի անվանի հայագետ և լեզվաբան Յոզեֆ Կարստն ի թիվս հայրենագիտական այլ հարցերի զբաղվել է նաև հայերեն–շումերերեն առնչությունների խնդրով: Վերջինս, ցավոք, զերծ չի մնացել հեղինակի՝ գրեթե ողջ լեզվաբանական ժառանգության նկատմամբ երկար տարիներ ծավալված բուռն քննադատական վերաբերմունքից, որի պատճառն անշուշտ Կարստի տեսական հայացքներն էին և հատկապես նրա «ալարողյան» տեսությունը:

Փորձելով հաշտեցնել իր ժամանակի հակադիր դրույթները լեզվական ցեղակցության և ընդհանրապես լեզվական առնչությունների մասին՝ Կարստն ընդունում էր և լեզվական ցեղակցության ավանդական ըմբռնումները, և լեզվական աստիճանական անցումների ու խառը լեզվի, և լեզուների հեռավոր ցեղակցության գաղափարը և այսպիսով հիմք տալիս ոչ հստակ հարցադրումներով ու լուծումներով հեղեղված իր «ալարողյան» տեսությանը: Վերջինս ոչ այլ ինչ է, քան լեզվի տարամետ և զուգամետ զարգացումների համադրման մի փորձ, որն արտահայտվում էր, այսպես կոչված, մասնակի ցեղակցության գաղափարով: Անշուշտ փորձն անհաջող էր, քանի որ գաղափարն ինքնին հստակ չէր, և ըստ էության փորձ էր արվում համադրելու իրարից տարբեր երևույթներ՝ լեզվական ցեղակցությունն ու լեզվական հարակցությունը՝ առանց հստակ տարբերակելու դրանց ունեցած առանձին դերը տվյալ լեզվի զարգացման գործընթացում: Դա, իհարկե, իր ժամանակի թելադրանքն էր, քանի որ այդ ժամանակաշրջանին բնորոշ չէր հիշյալ երևույթների հստակ տարբերակումը, որն իր հերթին պայմանավորված էր նոստրատիկ և տարածքային լեզվաբանությունների զարգացման ցածր մակարդակով:

Այդուհանդերձ դա հարուցում էր համեմատաբանների իրավացի զայրույթն ու քննադատությունը, որի հետևանքով անտեսվում էին նաև Կարստի բավականին հավաստի համեմատական քննությունները, ինչպիսին են նաև հեղինակի բերած հայերեն–շումերերեն բառային և քերականական զուգահեռները, որոնք Կարստը քննել է իր «Հայերի ազգագրական դիրքը» հոդվածում [16, էջ 401–413]:

Փորձելով հիմնավորել հայերենի երկբնույթ լինելու իր տեսակետը՝ նա բերում է ավելի քան 280 բառային և քերականական զուգահեռներ: Հարկ է նշել, որ նրանից առաջ այդ խնդրին անդրադարձել է նաև Գովհ. Սաքըզյանը

1909 թ. «Հանդես ամսօրյայում» տպագրված իր «Աքքադյան լեզու» հոդվածում, [8, էջ 333–336], որտեղ տեղ են գտել մոտ ութսուն զուգահեռներ: Ի դեպ, Յ. Սաքքայանը սխալմամբ նույնացնում է աքքադերեն և շումերերեն անվանումները [8, էջ 333]:

Այսպիսով Յ. Կարստը երկրորդն է, որ զբաղվել է հայերեն–շումերերեն զուգահեռներով: Նշենք, որ նա ծանոթ է եղել Յ. Սաքքայանի վերոհիշյալ հոդվածին և նրա բառային զուգահեռներին: Իր «Հայերենի ազգագրական դիրքը» հոդվածում գրեթե լիովին ընդգրկելով Սաքքայանի բառացանկը Կարստն ընդլայնում է այն և հասցնում մինչև 284–ի:

Քանի որ այդ հոդվածում ի հայտ են գալիս Կարստի «ալարոդյան» տեսության առաջին սաղմերը, ապա զարմանալի չէ, որ այն իր ժամանակին քննադատական մեծ ալիք բարձրացրեց [6, էջ 608]: Ինչ վերաբերում է հայերեն–շումերերեն առնչություններին, ապա պետք է նկատի ունենալ, որ այդ շրջանում գրեթե նվազագույնի էր հասցված հիշյալ լեզուների միջև հնարավոր աղերսների գոյության հավանականությունը: Դա վերաբերում է ինչպես վերոհիշյալ լեզուների ծագումնաբանական (իմա՝ հեռավոր ցեղակցության), այնպես էլ փոխազդեցական առնչություններին: Ճիշտ է, դեռևս այդ շրջանում փորձեր եղել են շումերերենը ծագումնաբանորեն կապելու այլ լեզուների և լեզվաընտանիքների հետ, այդ թվում նաև հնդեվրոպական (Շ. Օտրան) [15], սակայն, անշուշտ դրանք զերծ չէին այդ շրջանի գիտական մտքին բնորոշ թերություններից, որն էլ առիթ էր տալիս սուր քննադատության: Հիշենք, օրինակ, Ա.Մեյեի քննադատության համար հիմնական կռվան հանդիսացող *կին, յառնել, մի բառերը*, որոնց հնդեվրոպական ծագումը նրան հիմք էր ծառայում պատահական համարելու այդ զուգահեռները և խիստ քննադատության ենթարկելու Կարստին [6, էջ 608]¹: Սակայն, ինչպես գիտենք, դրանք մոստրատիկ բնույթի ընդհանրություններ են և առկա են ոչ միայն շումերերենում և հայերենում: Այլ հարց է, որ դեռևս չի կարելի լուծված համարել շումերերենի մոստրատիկ ընդհանրությանը պատկանելու հարցը:

Ինչ վերաբերում է հայերեն–շումերերեն փոխազդեցական առնչություններին, ապա դրանք նույնպես անհավանական էին թվում՝ կապված հնդեվրոպական նախահայերենից եվրոպայում տեղադրման և հայերի եկվոր լինելու տեսակետի հետ, և լավագույն դեպքում հավանական էր համարվում միջնորդավորված շփումների հնարավորությունը: Հայտնի է, սակայն, որ ներկայումս հայերի եկվոր լինելու տեսակետը դադարել է տիրապետող լինելուց, և այսպիսով վերացրել այն հիմնական կռվանը, որը բացառում էր հայերեն–շումերերեն անմիջական

¹ Ի դեպ, Վիլ Ժիտակյանը վերաբերում է հայերեն–ալթայան լեզուների առնչություններին:

փոխազդեցությունների հնարավորությունը: Առավել ևս, երբ լեզվական փաստերը նույնպես վկայում են նրանց հնագույն շփումների մասին: Դրա օգտին են խոսում նաև ժամանակագրական տվյալները: Այսպես, ինչպես գիտենք, հայերենի որպես ինքնուրույն լեզվի գոյությունը վերագրվում է մ.թ.ա. III հազարամյակին, իսկ շումերերենի գոյության ժամանակաշրջանը համարվում է մ.թ.ա. V–II հազարամյակները: Հայերի և շումերների շփումները անհնարին չեն թվում նաև աշխարհագրական դիրքի տեսանկյունից, քանի որ Հայկական լեռնաշխարհը հարավում սահմանակցում է Միջագետքի հետ: Այսպիսով կարծում ենք, որ չի կարելի լիովին բացառված համարել ինչպես շումերերենի և հնդեվրոպական ընդհանրության, այնպես էլ շումերերենի և հայերենի անմիջական շփումների հնարավորությունը:

Նկատի ունենալով վերոհիշյալ տեսակետները՝ Կարստի հայերեն–շումերերեն զուգահեռները, ըստ իրենց բնույթի, կարելի է դիտարկել հետևյալ տեսանկյուններից:

1. Բառեր, որոնք վկայում են այս երկու լեզուների անմիջական փոխազդեցությունների մասին, ինչպես, օրինակ, բառեր, որոնք հայերենում լինելով հնդեվրոպական ծագման, գրեթե նույն ձևով առկա են նաև շումերերենում, օրինակ հայ. աւդի – շում. udu «ոչխար», հայ. գաբ – շում. gab «ծեռք» կամ բառեր, որոնք առկա են միայն այս երկու լեզուներում, ինչպես օրինակ հայ. արագիլ – շում. arikgilim «մի բարձրասրուն թռչուն»: Հայագիտության մեջ այս զուգահեռի վերաբերյալ իրարամերձ կարծիքներ են եղել: Աճառյանը այն կցում է հուն. *πελαργός* «արագիլ» բառին և երկուսն էլ բխցնում մի փոքրասիական լեզվից [1, 1, էջ 292]: Գր. Ղափանցյանը ավելի հավանական է համարում շումերական աղբյուրը: Շումերական բառը, ըստ նրա, կարող էր անցած լինել հայերին ասուրաբաբելացիների միջոցով [5, էջ 21]: Ըստ Ռ. Իշխանյանի շատ ավելի հավանական է շումերական անմիջական աղբյուրը [3, էջ 70]: Թեև Գ. Ջահուկյանն այնքան էլ չի հավատում բառի շումերական ծագման վարկածին, բայց միայն այն պատճառով, որ քիչ հավանական է համարում շումերերենի և հայերի անմիջական շփումների հնարավորությունը, իսկ նրանց միջև միջակա օղակները բացակայում են [11, էջ 3; 7, էջ 311]:

2. Բառեր, որոնց ծագումը դեռևս անհայտ է: Սրանք հիմնականում լինելով մշակութային բառեր՝ տարածված են Առաջավոր Ասիայի ժողովուրդների մեջ: Նրանց սկզբնաղբյուրը կարող է լինել և շումերերենը աքքադերենի միջոցով անցած լինելով այլ լեզուների, և՛ որևէ այլ, երբեմն անհայտ լեզու: Այսպիսիք են, օրինակ հայ. կտավ – շում. kud, (gad (a/u))² «կտավ», հայ. ցեց – շում. zizi

² Այս և հետագա դեպքերում փակագծում դրված բառը տվյալ միավորի արդի համարժեքն է, քանի որ Կարստի աղբյուրներն ավելի հին են և փոքր–ինչ տարբերվում են նորագույն աղբյուրների տվյալներից: Վերջիններս հիմնականում քաղված են Գ. Ջահուկյանի վերոհիշյալ գրքից:

«որդ» (ziz), հայ. անագ – շում. anag, «անագ» (niggi, naggu), հայ. կապար – շում. abar «կապար», հայ. ագարակ – շում. agar «ղաշտ, արտ»: Յր. Աճառյանը հայերեն ագարակ բառը ենթադրաբար բխեցնում է փոքրասիական մի որևէ կորած հնդեվրոպական լեզվից [1, 1, էջ 177]: Ըստ Գր. Ղափանցյանի՝ հայ. ագարակը, ինչպես նաև հնդեվրոպական նրա մյուս զուգահեռները ծագում են շումերա-աքքադական agar –ից [5, էջ 13], [4, էջ 36]: Ուշագրավ է, որ համանման կարծիք է հայտնել նաև նեոնոստրատիզմի հիմնադիր Վ. Մ. Իլիչ–Սվիտիչը, որը, կարծես, լրացնելով Գ. Ղափանցյանին, ոչ միայն հնդեվրոպական, այլև սեմական համարժեքների աղբյուրը համարում է շումերերենը [13, էջ 8]³: Ջահուկյանը այս բառը նույնպես դասում է մշակութային բառերի շարքին, որոնց սկզբնաղբյուրը կամ շումերերենն է՝ այլ լեզուների մեջ տարածված աքքադերենի միջոցով, կամ աքքադերենը, կամ որևէ այլ, երբեմն անհայտ լեզու՝ հմմտ. շում. agar «ղաշտ, արտ», աքքադ. ugaru(m) և այլն [8, էջ 452]:

3. Կարստի հայերեն – շումերերեն համեմատություններում կան նաև առայժմ դժվար բացատրելի զուգահեռներ, որտեղ, ըստ Գ. Ջահուկյանի, կարելի է տեսնել տարբեր կարգի միջնորդող օղակներ

հայ. գնալ – «գնալ, ուղարկել» – շում. gin «գնալ, ուղարկել» [7, էջ 452]

հայ. կով (հ.–ե.*g*ou) – շում. gu (gu(d)) «եզ» [7, էջ 452]

հայ. ոսկի – շում. guškin «ոսկի» [7, էջ 452]

հայ. պատ – շում. bad «պատ, ամրոց, բերդ» [7, էջ 452]

հայ. պար – շում. bar «կողմ, պատել, շրջապատել» [7, էջ 452]

հայ. ծագ «ծայր» – շում. zag «կողմ, սահման» [7, էջ 452]

հայ. կամակոր – շում. gam «թեքվել» [7, էջ 452] և այլն:

Այս զուգահեռներից մի քանիսին տարբեր առիթներով անդարդարծել են նաև այլ լեզվաբաններ: Այսպես՝ Վ. Վիցիլը հայ. ոսկի բառը համարում է շումերական փոխառություն՝ անցած ուրարտերենի միջոցով [18]: Կարծիքներ կան նաև հայերեն բառի հնդեվրոպական ծագման վերաբերյալ [10, էջ 73]: Ի դեպ, այս զուգահեռն իր համարժեքն ունի ուգրաֆիննական լեզուներում, որը հայտնի է եղել նաև Կարստին [17, էջ 6]:

Կարստի հայերեն–շումերերեն զուգահեռները եղել են նաև Ռ.Իշխանյանի ուշադրության կենտրոնում, որը դրանցից առանձնացրել է շուրջ քսան զուգահեռներ, որոնք, ըստ նրա, կարող են դասվել շումերերեն–հայերեն անմիջական փոխառությունների շարքին, այդ թվում՝ վերոհիշյալ gin – գնալ, bad – պատ, ինչպես նաև՝ pag – փակ, gir–gir «կայծակ» – զրգիռ և այլ

³ Ի դեպ, Իլիչ–Սվիտիչը հնարավոր է համարում միայն սեմական համարժեքի շումերերենից անմիջական փոխառություն լինելը, հնդեվրոպականը բխեցնելով սեմական աղբյուրից՝ շումերերեն >սեմական լեզուներ >հնդեվրոպական լեզուներ [13, էջ 8]:

գուգահեռներ [2; 3] (հմտ. նաև վերը նշված գուգահեռները): Ուշագրավ է նաև հայ. կով – շում. *gu* գուգահեռը: Հայ. կով բառի բնիկ լինելը երբևիցե կասկած չի հարուցել [1, 2, էջ 693; 7, էջ 129]: Սակայն հնդեվրոպական ձևն իր գուգահեռն ունի նաև սեմական լեզուներում: Շումերերենի, հնդեվրոպական ու սեմական լեզուների այս գուգահեռի ակունքները Վ. Ս. Իլիչ–Սվիտիչը մեկնաբանում է որպես հնագույն փոխառություն հնդեվրոպական լեզուներում, որի աղբյուրը կարող են լինել կամ սեմական լեզուները, կամ էլ շումերերենը, որը հավասարապես աղբյուր է ծառայել նաև սեմական լեզուների համար [13 էջ 8]:

4) Թեև շումերերենի նոստրատիկ ընդհանրությանը պատկանելու հարցը դեռ իր սպառնիչ լուծումը չի ստացել, սակայն Կարստի վերոհիշյալ բառացանկում կան նաև գուգահեռներ, որոնց համարժեքներն առկա են նոստրատիկ լեզուներում: Ահավասիկ այդ գուգահեռների ցանկը՝

շում. *il* «բարձրացնել» – հայ. ելանել < հ.–ե. **el* (նոստր. **çal* ^Λ) [7, էջ 452]

շում. *gin* «աղախին» – հայ. կին < հ.–ե. **g-en* (նոստր. **kūni*) [7, էջ 452]

շում. *maē, mē* «ես» – հայ. իմ < հ.–ե. *mē* (թեք հոլովման հիմք) (նոստր. **mi*) [14, 2, էջ 63]

շում. *alim, alin* «վիթ» – հայ. եղն < հ.–ե. **el-en-* (նոստր. **ʔili*) [14, 1, էջ 272]

շում. *an, na* «ցուց. դեր.» – հայ. նա, այն < հ.–ե. *(*e*)*no-*/(*o*)*no-* (նոստր. **NA*) [14, 2, էջ 93]

շում. *er-i* «մարդ» – հայ. այր < հ.–ե. *(*ə*)*ner* (նոստր. **NajR* ^Λ) [14, 2, էջ 92]

շում. *erim, rim* «հիմք» – հայ. արմատ < հ.–ե. **er-* (նոստր. **Horā*) [7, էջ 72]

շում. *gar* «ուտել» – հայ. կեր < ?հ.–ե. **g-erh^u* (նոստր. **gur* ^Λ) [14, 2, էջ 265]

շում. *gudu* «ուտել» – հայ. ուտել < հ.–ե. **hed* (նոստր. **ʔitā*) [14, 1, էջ 273]

շում. *tidnu* «հետևի մաս» – հայ. տուտն < հ.–ե. **dud-* «վերջավորություն» (նոստր. **daλ* ^Λ) [7, էջ 71]:

Անշուշտ, չի կարելի ենթադրել, թե մենք հակված ենք շուտափույթ եզրակացություններ անելու շումերերենի՝ նոստրատիկ ընդհանրությանը պատկանելու հարցի վերաբերյալ: Դա առանձին բնութայն նյութ է, և մենք ամենևին հավակնություն չունենք սպառնիչ լուծում տալ դրան: Սակայն ամտեսել այդ գուգահեռի ակունքները, կարծում ենք, սխալ է: Առավել ևս սխալ է հայ–շումերական առնչությունների հնարավորության լիովին ժխտումը, ինչպես դա արվում էր մեկ դար առաջ:

Ինչ վերաբերում է շումերերենի և նոստրատիկ ընդհանրության ցեղակցական աղբյուրներին, ապա հիշենք, որ դրա հաստատման փորձ է կատարել ռուս գիտնական Ա. Բ. Դոլգոպոլսկին, որը հավանականության տեսության տեսանկյունից նոստրատիկ ընդհանրության էր փորձում կցել նաև չուկոտական չատկյան լեզուները և շումերերենը: Ճիշտ է, նա ամենաքիչ

հավանական էր համարում նոստրատիկ ընդհանրությունը շումերերենի պատկանելու հնարավորությունը [12], սակայն մեր օրերում այդ խնդրով զբաղվող որոշ գիտնականներ, ինչպես, օրինակ, ամերիկացի լեզվաբան Ա. Բոմհարդը, ոչ միայն չեն ժխտում այդ հնարավորությունը, այլև փորձում են որոշակի հնչյունական օրինաչափություններ սահմանել շումերերենի և մյուս նոստրատիկ լեզուների միջև [9]:

Այսպիսով տարիների հեռավորությունից փորձելով գնահատել Յ. Կարստի վաստակը հայերեն-շումերերեն առնչությունների վերհանման գործում՝ կարող ենք եզրակացնել, որ հեղինակին իրոք հաջողվել է հայտնաբերել բավականին հավաստի զուգադիպումներ, որոնք վկայում են կամ տվյալ լեզուների հնագույն շփումների, կամ դրանց հեռավոր ցեղակցության մասին, եթե իհարկե ապացուցվի, որ շումերերենը պատկանում է նոստրատիկ ընդհանրությանը:

Իհարկե կան նաև դեռ դժվար բացատրելի դեպքեր, որոնք ապացույց են այն բանի, որ դեռ վաղ է խոսել Կարստի բերած հայերեն-շումերերեն զուգահեռների լիարժեք վերանայման մասին: Դրա պատճառն անշուշտ հայագիտության այս ոլորտի ոչ բավարար ուսումնասիրվածությունն է, որի հետագա զարգացումը միայն կարող է նպաստել Կարստի բերած հայերեն-շումերերեն զուգահեռների ավելի ընդգրկուն ներկայացմանը: Չի բացառվում նաև, որ Կարստի վաստակն այդ բնագավառում նույնպես իր նպաստը բերի այդ կարգի քննություններին:

Գ Ր Ա Կ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, 1 – 4, Եր., 1971–1979:
2. Իշխանյան Ռ.Ա., Հայերենում եղած շումերական բառերի հարցը, ԲԵՂ, 1984, 1.
3. Իշխանյան Ռ.Ա., Բնիկ հայերեն բառեր և հնագույն փոխառություններ, Եր., 1989:
4. Ղափանցյան Գ., Ուրարտուի պատմություն, Եր., 1940:
5. Ղափանցյան Գ., Ասուրա-բաբելական բառեր հայերենում, ՀԳԱՍ, 1945:
6. Մեյն Ա., Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1978:
7. Ջահուկյան Գ.Բ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987:
8. Սաքրճյան Դովհ., Աքքադյան լեզու, ՀԱ, 1909:
9. Бомхард А.Р., Очерк сравнительной фонологии так называемых „ностратических” языков, ВЯ, 1989, 3.
10. Гамкрелидзе Т.В., Иванов В.В., Индоевропейский язык и индоевропейцы, 1 – 2, Тбилиси, 1984.
11. Джаукян Г.Б., Об аккадских заимствованиях в армянском языке, ИФЖ, 1980, 3–4.
12. Долгопольский А.Б., Гипотеза древнейшего родства языковых семей Северной Евразии с вероятностной точки зрения, ВЯ, 1964, 2.

13. Иллич—Свитыч В.М., Древнейшие индоевропейско—семитские контакты, „Проблемы индоевропейского языкознания“, М., 1964.
14. Иллич—Свитыч В.М., Опыт сравнения ностратических языков, 1—3, М., 1971—1984.
15. Autran Ch., Sumérien et Indo—Européen, Paris, 1925.
16. Karst J., Zur ethnischen Stellung der Armenier, Husarjan, Wien, 1911.
17. Karst J., Die vorgeschichtlichen Mittelmeervölker, Heidelberg, 1931.
18. Vicychl W., Sumerisch guskin, armenisch oski «Gold», HA, 79, 1965.

Гагинян А. Р.

Армяно—шумерские взаимоотношения согласно „алародской“ теории Йозефа Карста

Резюме

Настоящая статья посвящена армяно—шумерским параллелям известного немецкого армениста и лингвиста Йозефа Карста, которые в следствие отрицательного влияния его теоретических взглядов подверглись критике или вообще были игнорированы. Исходя из данных современной арменистики, сделана попытка выявить рациональное зерно в сравнительных исследованиях Йозефа Карста. В результате этого из армяно—шумерских параллелей автора были выделены древнейшие заимствования, слова из сферы культуры и параллели ностратического характера, если конечно будет доказано, что шумерский язык принадлежит к ностратическим языкам.

Gaginyan A. R.

Armenian—Sumerian Relations according to the „Alarodian“ Theory of Joseph Karst

Summary

This article is about the Armenian—Sumerian parallels drawn by the famous German linguist Joseph Karst. These are exposed to criticism because of his theoretical views. The article attempts to review the comparative research by J.Karst. The conclusion is that a number of lexical and grammatical parallels drawn by J.Karst are grouped into ancient loan words, cultural words, nstratic parallels, etc.